# ՀՀ ՕՐԵՆՔԸ «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | ՀՕ-336-Ն |
| Տիպ | Օրենք |
| Ակտի տիպ | Հիմնական ակտ (12.11.2025-մինչ օրս) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | Միասնական կայք 2025.11.10-2025.11.23<br>Պաշտոնական հրապարակման օրը 11.11.2025 |
| Ընդունող մարմին | ՀՀ Ազգային ժողով |
| Ընդունման ամսաթիվ | 24.10.2025 |
| Ստորագրող մարմին | ՀՀ Նախագահ |
| Ստորագրման ամսաթիվ | 10.11.2025 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 12.11.2025 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

# Օ Ր Ե Ն Ք Ը

**Ընդունված է 2025 թվականի հոկտեմբերի 24-ին**

## «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Գնումների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«17) գնման առարկայի բնութագիր՝ գնվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշներ, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններ.»:

**Հոդված 2.** Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում՝
1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և բխեն կարիքից, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.».
2) 4-րդ կետից հանել «և համարժեք» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 25-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«1. Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝
1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.
2) փոփոխել գնման առարկան.
3) խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:
2. Պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերի փոփոխման դեպքերը և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

**Հոդված 4.** Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասում «ժամկետը սահմանվում է 10 աշխատանքային օր» բառերը փոխարինել «ժամկետը սահմանվում է հրավերով և չի կարող պակաս լինել 10 աշխատանքային օրից» բառերով:

**Հոդված 5. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:
2. Սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսված և չավարտված գնման գործընթացների վրա:
3. Սույն օրենքից բխող Կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

**Հանրապետության նախագահ** **Վ. Խաչատուրյան**

2025 թ. նոյեմբերի 10
Երևան
ՀՕ-336-Ն

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 11 նոյեմբերի 2025 թվական:**

**Փոփոխման պատմություն**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
| --- | --- |

**Փոփոխված ակտ**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
| --- | --- |